ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

№ ԱԲ/610-2024

27. 12 2024 թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԳԱՐԱՆՏ 24» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի 88-րդ հոդվածի պահանջներով՝

Պ Ա Ր Զ Վ Ե Ց

Գործի նախապատմությունը.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) 24.10.2024 թվականին կնքվել է «ԵՋԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/82-2» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) 2-րդ չափաբաժնի մասով՝ դյուրակիր համակարգիչներ թվով 6 հատ, համաձայն որի Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում մատակարարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները, սակայն պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չի մատակարարվել :

Պատասխանատու ստորաբաժանման կողմից համաձայն Պայմանագրի 2.1.5 կետը սահմանվել է ապրանքի մատակարարման նոր ժամկետ՝ 5 օրացուցային օր, սակայն Վաճառողը սահմանված ողջամիտ ժամկետում չի մատակարարել սահմանված ապրանքը:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 2.4.4 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

Հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման 26.12.2024թ. արձանագրությունը և հիմք ընդունելով, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները համաձայն Պայմանագրի 2.4.1, 2.4.2 և 2.4.4 կետերը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ «ԵՋԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/82-2» ծածկագրով Պայմանագիրը:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ): Մասնակիցն ընդգրկվում է Ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների Ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Որոշում եմ

1. «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Որոշումը տրամադրվում է «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Վաճառողին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ-ի
Գլխավոր տնօրենի պ/կ՝

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մատակարարման և Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ, Ն. Փարսադանյան
Կատարող՝ Իրավաբանական և պայմանագրային բաժնի իրավաբան, Գ. Ստեփանյան
Հեռ. 011 47 27 60